



«ԵՐԵՎԱՆԻ ՄԻՍԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

Ընդունվել է «Երևանի Միսիթար Հերացու անվան
պետական բժշկական համալսարան»
հիմնադրամի ռեկտորի 2017 թվականի հոկտեմբերի 23-ի
թիվ 108Մ հրամանով

**«ԵՐԵՎԱՆԻ ՄԻՍԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ
(ՆԵՐՔԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ) ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2014 թվականի նոյեմբերի 27-ի 1407-Ն որոշմամբ հաստատված «Երևանի Միսիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 46-րդ կետի 12-րդ ենթակետը, 20-րդ ենթակետը,

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել «Երևանի Միսիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի սովորողների վարքագծի կանոնները (ներքին կարգապահական կանոններ)՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 2017 թվականի նոյեմբերի 1-ից:

Ա.ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐ

(ՆԵՐՔԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ)

«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն վարքագծի կանոնները (ներքին կարգապահական կանոններ) (այսուհետ՝ վարքագծի կանոններ) տարածվում են «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամում (այսուհետ՝ Համալսարան) միջին մասնագիտական, բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն, ինչպես նաև լրացուցիչ կրթություն ստացող սովորողների (այսուհետ՝ Սովորողներ) նկատմամբ:
2. Սույն հրամանով սահմանվում են սովորողի վարքագծին, ներառյալ ուսումնական գործընթացում դրսևորվող վարքագծին ներկայացվող պահանջները, սովորողի իրավունքների, պարտականությունների հիմնական շրջանակը, կարգապահական պատասխանատվության կիրառմանը ներկայացվող հիմնական պահանջները:
3. Համալսարանի բոլոր սովորողները պարտավոր են պահպանել Հայաստանի Հանրապետության օրենսդրության, Համալսարանի Կանոնադրության և Համալսարանում գործող ներքին ակտերը, ներառյալ վարքագծի սույն կանոնները:

4.Վարքագծի սույն կանոնները նպատակ ունեն խթանել Համալսարանի ակադեմիական միջավայրում անհատի իրավունքների և ազատությունների նկատմամբ հարգալից վերաբերմունքի ձևավորումը, կարգապահությունը, զարգացնել անհատական պատասխանատվության սկզբունքի կիրառումը:

2.ՍՈՎՈՐՈՂԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

5.Սովորողը՝

- 1) իրավունք ունի սովորել իր ընտրած մասնագիտությամբ որակյալ և աջակցող կրթական միջավայրում, ինչը նշանակում է, որ ուսուցումը պետք է իրականացվի սովորողի պատվի և արժանապատվության հարգման, որևէ հիմքով խտրականության բացառման, նրա իրավունքների և ազատությունների, ներառյալ ակադեմիական ազատության և ինքնավարության իրավունքների պահպանմամբ,
- 2) իրավունք ունի կրթական գործընթացում ակնկալել Համալսարանի լիակատար աջակցությունը և օգնությունը,
- 3) իրավունք ունի օրենքով սահմանված անձնական տվյալների պաշտպանության,
- 4) իրավունք ունի արդար, անկողմնակալ գնահատման,
- 5) իրավունք ունի մինչև կարգապահական պատասխանատվության ենթարկվելը բացատրություն տալու, իսկ Համալսարանի ներքին ակտերով նախատեսված դեպքերում՝ նաև լսված լինելու,
- 6) ունի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, այլ օրենսդրական ակտերով, Համալսարանի կանոնադրությամբ, ներքին ակտերով սահմանված այլ իրավունքներ և ազատություններ:

3.ՍՈՎՈՐՈՂԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

6.Սովորողը պարտավոր է միջանձնային հարաբերություններում՝

1)հարգել Համալսարանի աշխատողների, սովորողների, պրակտիկայի ընթացքում բուժաշխատողների, այլ աշխատողների, պացիենտների պատիվն ու արժանապատվությունը, ցուցաբերել հարգալից, բարեկիրթ վերաբերմունք ուսումնառության ողջ ընթացքում,

2) բացառել Համալսարանի աշխատողների, այլ սովորողների, իսկ պրակտիկայի ընթացքում նաև բուժաշխատողների և պացիենտների նկատմամբ խոսքի կամ գործողության միջոցով վիրավորող, ստորացնող, ահաբեկող, խտրական, ստիպողական արարքները, ֆիզիկական ուժի կիրառումը կամ այլ ոտնձգությունը,

3)անձնական մասնակցություն ունենալ կրթական միջավայրում հավասարության և ներառական մոտեցումների ձևավորմանը:

7.Սովորողն ուսումնական գործընթացում պարտավոր է՝

1)կատարել ուսումնական պլաններով և ուսումնական գործընթացի ժամանակացույցով նախատեսված առաջադրանքները, ցուցաբերել ակադեմիական բավարար առաջադիմություն,

2)բացառել դասերին կամ ընդմիջումներին միջանցքներում աղմկելը, լսարաններում անցուդարձ կատարելը կամ լսարարանների դռները անհարկի բացելը,

3)բացառել դասերի՝ բացառությամբ տվյալ գործընթացում Համալսարանի կողմից թույլատրվածների, գիտելիքների ստուգման, թեզերի պաշտպանության ընթացքում գրականության էլեկտրոնային կամ դասագրքային աղբյուրների, ցանկացած տեխնիկական միջոցների, ներառյալ բջջային հեռախոսների, ականջակալների, այլ կրիչների օգտագործումը,

4)բացառել գրագողությունը կամ այլ անձի կողմից կատարված ուսումնական, գիտական աշխատանքների ներկայացումը որպես իր կողմից կատարված,

5) բացառել գիտելիքների ստուգման գործընթացներում՝

ա. ուրիշ սովորողի փոխարեն ներկայանալը կամ մասնակցելը կամ

բ. սեփական անձի փոխարեն այլ սովորողի (անձի) ներկայանալուն ուղղված գործողություններ կատարելը,

6)բացառել դասերից անհարգելի ուշացումը: Անհարգելի է համարվում դասը սկսելու համար Համասարանի կողմից սահմանված ժամանակացույցի խախտմամբ դասի ներկայանալը՝ առանց համապատասխան դեկանատին նախապես նախազգուշացնելու,

7) բացառել դասերից անհարգելի բացակայությունները:Անհարգելի բացակայություն է համարվում առանց ՀՀ օրենսդրությամբ սահմանված հիմնավորող փաստաթղթերի ներկայացման՝ դասերին չներկայանալը,

8)բացառել ուսումնական գործընթացին, ներառյալ բժշկական հաստատություններ ավկոհոլային խմիչքներ կամ թմրամիջոց կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր օգտագործած վիճակում ներկայանալը,

9) բացառել մինչև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով որակավորման ստացումը, ներկայանալ որպես բուժաշխատող,

10) բացառել Համալսարանին որևէ իրավունքով պատկանող գույքի կամ աղբյուրների վնասումը կամ ոչ նպատակային օգտագործումը,

11) բացառել չթույլատրված ստորաբաժանումներ կամ մասնաշենքեր մուտք գործելը,

12) բացառել հրազեն կամ քիմիական կամ պայթուցիկ նյութերի կամ կտրող, ծակող գործիքների կամ սարքերի ներսերումը կամ կիրառումը Համալսարանում կամ դրան պատկանող տարածքներում,

13)բացառել թմրամիջոց կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ներսերումը Համալսարան կամ դրան պատկանող տարածքներ,

14)բացառել Համալսարանի տարածքում ծխելը, բացառությամբ դրա համար հատկացված հատուկ տարածքների,

15) բացառել Համալսարանում մոլեխաղերով զբաղվելը,

16)բացառել ուսումնառության ընթացքում պացիենտի վերաբերյալ հայտնի դարձած բժշկական գաղտնի տեղեկությունների փոխանցումը երրորդ անձանց,

17) բացառել Համալսարանին ոչ հավաստի կամ ապակողմնորոշող տեղեկատվության ներկայացումը,

18) Համալսարանի տարածքներում պահպանել հասարակական կարգը,

19)բարձր պահել Համալսարանի պատիվն ու արժանապատվությունը,

20)բացառել Համալսարանում հասարակական, քաղաքական, կրոնական գործունեությունը և դրանց կառույցների ստեղծումը՝ բացառությամբ Համալսարանի կանոնադրությամբ թույլատրվածների,

21) Համալսարանի հետ կնքված պայմանագրին համաձայն սահմանված կարգով և ժամկետում վճարել ուսման վարձը:

8.Սովորողը պարտավոր է Համալսարանում պահպանել հագուկապին և անձնական հիգիենային ներկայացվող հետևյալ պահանջները.

1) Ընդհանուր բնույթի պահանջներն են.

ա. հազուստը պետք է լինի մաքուր, պատշաճ վիճակում, արգելվում է կրել սպորտային համազգեստ,

բ. մազերը պետք է լինեն մաքուր և հարդարված,

գ. պետք է պահպանվի անձնական հիգիենան,

դ. սովորողները համապատասխան պահանջի առկայության դեպքում պետք է կրեն բժշկական համազգեստ, իսկ ուղղաբժշկական ֆակուլտետի սովորողները՝ նաև զիվորական համազգեստ,

դ. միջին և ավելի երկարության մազերը պետք է հարդարված լինեն այնպես, որ չխանգարեն պացիենտների հետ, ինչպես նաև այլ կլինիկական աշխատանքների իրականացմանը,

ե. կլինիկական գործունեության ընթացքում եղունգները պետք է լինեն մաքուր, կարճ կամ միջին երկարության,

զ. կլինիկական գործունեության ընթացքում համապատասխան պահանջի առկայության դեպքում չի թույլատրվում ձեռքերին զարդեր կրելը,

է. բժշկական արտահազուստը, ձեռնոցները, դիմակները, մազերը ծածկող գլխարկները, բախիլները պետք է կրել միայն կլինիկական այն ստորաբաժանումներում, որտեղ ընթացակարգերով նման պահանջ կա:

9. Սովորողը պարտավոր է Համալսարանից դուրս հարաբերություններում, այդ թվում սոցիալական ցանցերում հանդես գալիս պահպանել հետևյալ պահանջները.

1) ձեռնպահ մնալ Համալսարանը վարկաբեկող, չճշտված, կեղծ տեղեկատվության տարածումից,

2) առանց Համալսարանի համաձայնության չօգտագործել Համալսարանի Խորհրդանիշը, անհատականացնող այլ նշաններ,

3) սեփական բլոգ վարելիս հստակ նշել, որ ներկայացվող կարծիքը, դիրքորոշումը հեղինակինն է, այլ ոչ թե Համալսարանինը,

4) չհրապարակել Համալսարանին վերաբերող և իրեն հայտնի դարձած Խորհրդապահական (կոնֆիդենցիալ) տեղեկատվությունը,

5) համալսարանի տարածքում նկարահանումներին մասնակցելիս նախապես ստանալ Համալսարանի իրավասու անձի թույլտվությունը,

6) առանց Համալսարանի պաշտոնական համաձայնության, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի հետ հարաբերություններում, այդ թվում և օտարերկրյա պետությունների, հանդես չգալ Համալսարանի անունից:

10. Սովորողները ունեն օրենսդրական ակտերով, Համալսարանի կանոնադրությամբ, Համալսարանի իրավական ակտերով սահմանված այլ պարտականություններ:

4. ՍՈՎՈՐՈՂԻ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ԿԻՐԱՌՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

11. Համալսարանի կանոնադրության, սույն կարգապահական կանոնների, ներքին այլ ակտերի պահանջները խախտելու համար սովորողը կարող է ենթարկվել կարգապահական պատասխանատվության:

12. Կարգապահական պատասխանատվությունը ներառում է տույժերի հետևյալ տեսակները՝

1) նախազգուշացում,

2) նկատողություն,

3) խիստ նկատողություն, որը գիտելիքների ստուգման գործընթացում կատարված կարգապահական խախտումների դեպքում կարող է համակցվել նաև՝

ա. գիտելիքների ստուգման դրական արդյունքների չեղարկմամբ և (կամ).

բ. եթե սովորողը օգտվում է Համալսարանի իրավական ակտերով նախատեսված ուսման զեղչի կամ կրթաթոշակ ստանալու իրավունքից, ուսման զեղչի դադարեցմամբ կամ կրթաթոշակից զրկմամբ (սույն դրույթը չի տարածվում ՀՀ նորմատիվ իրավական ակտերով նախատեսված ուսման զեղչի և կրթաթոշակի տրամադրման հետ կապված հարաբերությունների նկատմամբ).

4) Համալսարանից հեռացում:

13. Կարգապահական պատասխանատվությունը կիրառվում է գրավոր կարգով:

14. Կարգապահական պատասխանատվությունը կարող է կիրառվել Ռեկտորի 2017 թվականի մարտի 3-ի թիվ 26-Մ հրամանի համաձայն:

15. Կարգապահական տույժի կիրառման դեպքում հաշվի են առնվում խախտման ծանրությունը և դրա հետևանքները, սովորողի մեղքը, այդ խախտման կատարման հանգամանքները:

16. Եթե սովորողը կատարել է սույն վարքագծի կանոններով չնախատեսված, սակայն ՀՀ օրենսդրությամբ, Համալսարանի ներքին ակտերով սովորողի համար սահմանված պահանջների խախտում, ապա նրա նկատմամբ կարող են կիրառվել միայն սույն հրամանով նախատեսված տույժի տեսակները՝ պահպանելով սույն հրամանի պահանջները: